

ԴՐՕՇԱԿ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

29ԴԴ (62ԴԴ) ՏԱՐԻ, ԹԻՒ 15 (1534), 30 ՅՈՒՆԻՍ - 12 ՕԳՈՍՏՈՍ 1998

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

- ԿՐԿՆԱԿ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ.....2

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԲԵՍ

- ՄՏԱԾՈՒԱԾ, ԾՐԱԳՐՈՒԱԾ ԽԻՉԱԽՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԲՈԼՈՐ ԲՆԱԳԱՄԱՆԵՐՈՒՄ Բուրինա Փիրումեան....3
■ ՎԱՂՈՒԱՅ ՕՐՈՒԱՅ ՄՏԱՀՈԳՈՒԹԵԱՄԲ Արա Գաթրիլեան....6

ՆԵՐԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵԱՑԶ

- ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ Անգիտնաբար Աագ Յարութիւնեան....8
■ ՎՏԱՆԳԱՒՈՐ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՉԻ ՍՔՈՂՈՒԱԾ Գրիգոր Գրիգորեան....11
■ ՓՈՔՐ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ Անահիտ Սարգսեան....14
■ ԱՐԴԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ (Յետադարձ հայեացք) Ռ. Սարիւնեան....16

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԻ 101ԱՄԵԱԿ

- ԽԱՆԱՍՈՐԸ ՈՐՊԷՍ ՊԱՏԳԱՄ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ Յովհաննէս Զատիկեան....25
■ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ ԵՐ ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ Արմէն Կարապետեան....30

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵԱՑԶ

- ՈՒՐ Է ԳՆՈՒՄ ԴԱՂՍՏԱՆԸ Սարգիս Սարգսեան....32

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

- ԳԵՐՄԱՆԻՈՅ ԸՆԿԵՐՎԱՐ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՆԵՐՈՒՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ (Ընկերային առաջադրանքներ).....35

- ԹՈՒՐՔԻՈՅ ՇՈՒՐԶ.....40

ՄՏԱԾՈՒԱԾ, ԾՐԱԳՐՈՒԱԾ ԽԻՉԱԽՈՒՄ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈԼՈՐ ԲՆԱԳԱԽԱՌՆԵՐՈՒՄ

Ռուբինա Փիրումեան

Խորհրդային կայսրութեան ամսպասելի փլուզումով ու նրա ապշեցուցիչ արագութեամբ մասնատումից վերստեղծուած Հայաստանի անկախութիւնը նշանակալից մի անկիւնադարձ արձանագրեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հարիւրամեայ պատմութեան մէջ:

Ապագայի հսկայ կարելիութիւններ խոստացող այդ անկիւնադարձին սակայն յաջորդեց վերիվայրումների ու իրարամերժ երեւոյթների գլխապտոյտ մի շրջան:

Կուսակցութեան ղեկավարութիւնը փորձեց քայլել իրեն պարտադրուած ճանապարհով՝ լուսագոյնս դիմագրաւել ոգետութիւնները, յուսախաբութիւնները, ամսպասելի մարտահրաւերները եւ, նոյնիսկ, իր կառոյցին, գործելակերպին ու ղեկավարման համակարգին պարտադրուած փոփոխութիւնների գնով, կուսակցական շարքերը առաջնորդել Դաշնակցութեան վայել անսայթաք ուղիներով:

Յաջողե՞ց: Չախողե՞ց:

Յետադարձ վերլուծումները երկուսի փաստերն էլ են տալիս:

Արդարացումի կարիք չկայ:

Փորձութեան շրջան էր ամբողջ մեր ժողովրդի համար՝ իր Սփիւռքի ու Հայրենիքի երկճիւղուած ու երբեմն հակադիր կառոյցներով, կազմակերպութիւններով, կուսակցութիւններով, քաղաքական, ընկերային ու տնտեսական դրուածքով եւ մանաւանդ՝ մտայնութեամբ ու աշխարհայեացքով:

Փորձութեան շրջան էր, որից ա-

նադարտ ու անյողդող դուրս չեկաւ եւ ոչ մէկը, նոյնիսկ ժողովրդի լիակատար վստահութիւնը շահած իշխանութիւնը: Անբնական վերիվայրումների այս շրջանը լուսագոյն դարձրեց կարող էր լինել՝ թոյլատրուած սխալներից սովորելու եւ արձանագրած յաջողութիւնների վրայ նորերը կառուցելու առումով:

Այսօր կանգնած ենք նոր անկիւնադարձի առջեւ:

Ապրում ենք նոյն ոգետութիւնը, ինչ ապրեցինք 1989ին՝ երբ Դաշնակցութիւնը իր դարձն էր յայտարարում Հայրենիք:

Դաշնակցութեան շարքերը մէկ անգամ եւս տարբեր պատճառներով գրաւիչ են դարձել: Մէկ անգամ եւս ապագան իր փայլուն երեսն է ցոյց տալիս ու մեծ կարելիութիւններ խոստանում: Առիթը ներկայացած է մէկ անգամ եւս:

Պահը ոգետիչ է մէկ անգամ եւս, բայց միեւնոյն ժամանակ մտահոգիչ: Պիտի կարողանա՞նք, արդեօք, վերջին տարիների մեր փորձը օգտագործել գծելու համար Հայ ժողովրդին ու Հայ Դատին ծառայելու յարմարագոյն ուղին, դաշնակցականավայել ուղին:

Անցումային շրջանը Հայաստանում դեռ չի աւարտուել:

Սփիւռք-Հայրենիք իրապաշտ փոխ-ճանաչումն ու կամբջումը, փոխադարձ օժանդակութիւնն ու դերաբաշխումը, Հայաստանի ընկերային, տնտեսական ու քաղաքական համակարգի հիմքը կազմող համայնավար աշխարհայեացքի յեղադարձումը եւ առողջ ու ազգա-

նպաստ տեսլականով դէպի ազատ աշխարհ, դէպի գործի, մտքի ու խղճի ազատութիւն անցումը դեռ չի կատարուել, դեռեւս շարունակուած է Հայաստանի վերելքի հիմքը սասանող արտագաղթը, ուղեղային պարպումը, գործազրկութիւնը, մշտաւորական գործի նկատմամբ վերջին տարիներում դրսեւորուած անտարբերութիւնը:

Այն՝ ինչ որ պիտի սկսէր 1991ին, պիտի սկսի հիմա եւ այն էլ ո՛չ թէ նոյն տեղից, այլ աւելի ներքեւից՝ քանի որ քանդուել է հիմը, իսկ դրա փոխարէն դրուած նորը դեռ շատ պարագաներում ուրոյն ձեւ չի ստացել, դեռ չի համապատասխանում համահայկական շահերին:

Ներկայ իշխանութիւնը նոյն փորձութեան չենթարկուեց քանդելու ամէն ինչ, յեղաշրջելու ամէն դրուածք, տապալելու ամէն անձնակազմ: Սա ի հարկէ որոշ չափով օգնեց երկրի կայունութիւնը պահելու եւ աւելորդ ցնցումների առաջն առնելու տեսակետից:

Միւս կողմից՝ այս մօտեցման հետեւանքով վերակառուցումը, վերանորոգումը կամ վերաստեղծումը բոլոր բնագաւառներում անընդհատ խոչընդոտների է հանդիպում:

Ժողովուրդը յոյսով է դիտում իշխանութեան գործունէութիւնը, ոգետւում է, երբ բարենպաստ որոշման մասին է լսում կամ անցեալի համեմատութեամբ դոյզն փոփոխութիւն է նկատում:

Ժողովուրդը անհամբերութիւն է ցոյց տալիս, երբեմն հրաշքներ ըսպասելով, երբեմն կատարուած փո-

փոխութիւնների մէջ կամ անփոփոխ մնացած դրուածքների մէջ յուսալի ապագայ չտեսնելով:

Սպասողական վիճակ է տիրում Հայաստանում, ակնկալիքների, յոյսի, յուսախաբութեան պայթուցիկ վիճակ:

Սպասումի շփոթ վիճակ է ապրում Սփիւռքը եւս. դեռ այնքա՛ն ուժեր պիտի վերակազմաւորուեն, վերափոխուեն, ուղղութիւն փոխեն, հոսանքի հետ քայլեն...

Իսկ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ իբրեւ հայ ժողովրդի վերջին դարու պատմութեան բոլոր ոլորտներում անժխտելի ու նոյնիսկ անփոխարինելի դեր ստանձնած մի կուսակցութիւն...

Հայ ժողովրդի գլխից անցած փորձորիկներում, իր ձեռք բերած փորձով ու կատարած դերով, իր բոլոր ձախողութիւններով ու յաջողութիւններով, Դաշնակցութիւնը մէկ բան փաստել է թէ՛ հային եւ թէ աշխարհին. Դաշնակցութիւնը աշխուրջ ու հաւատարիմ պահապանն է հայ ժողովրդի շահերի ու Հայ Դատի:

Դարաբադի զինեալ պաշտպանութիւնը վկայ. ի սէր Հայաստանի պետականութեան կայացման եւ ամրակայման՝ ապագային իշխանութիւնների դէմ նրա մղած պայքարը վկայ. միջազգային ատեաններում Հայ Դատի արդար լուծման ճամբին՝ նրա կատարած յարատեւ աշխատանքը վկայ:

Դաշնակցութիւնը այդպէս էլ պէտք է շարունակի մնալ՝ աշխուրջ ու անդեղել պահապան, շեղումները խարազանող, շիտակ ուղին փառաբանող, անաչառ քննադատ:

Հայաստանի իշխանութեան գրլուխ, մասնակից, թէ՛ դիտող, սփիւռքահայ կեանքի միահեծան ղեկավար, ղեկավարութեան մասնակից, թէ՛ փորձամասնութեան կուսակցութիւն, Դաշնակցութիւնը վեր պիտի կանգնի մանր հաշիւներից եւ գործի անանձնական նուիրումով՝ հաւա-

տարիմ իր պատմութեան նուիրեալների գծած ուղիին. դա՛ պիտի լինի Դաշնակցութեան գլխաւոր դերը հայ ժողովրդի ազգային-քաղաքական կեանքի ներկայ հանգրուանում:

Անձնական փառասիրութիւններին յագուրդ տուող, կուսակցութեանը փառք, դիրք ու պատիւ խոստացող առիթները շատ են. առանց խոր վերլուծումների, հաշուարկումների ու ծրագրաւորման՝ այդ առիթները յափշտակելը անխուսափելի գայթակղութիւն կը լինի:

Փորձաքարին դիպչողը, քննութեան ենթարկուողը տուեալ անձը չի լինի, այլ ամբողջ կուսակցութիւնը՝ իր ներկայով ու ապագայով:

Այս բոլորի դիմաց ծայրայեղ ըզգուշաւորութիւնն էլ ո՛չ Դաշնակցութեան նկարագրին է վայել եւ ոչ էլ պիտանի է այսօր, երբ ճակատագրական քայերը միայն ազգի ճակատագիրը կը փրկեն:

Ուրեմն մտածուած, ծրագրուած խիզախում՝ աշխատանքի բոլոր բնագաւառներում:

Այսօր յաճախակիօրէն խօսուում է Սփիւռք-Հայրենիք յարաբերութիւնների ու համագործակցութեան մասին, զիտաժողովներ են կազմակերպուում, համագործակցութեան բնագաւառներ են ճշտորոշուում, «Մէկ Ազգ, Մէկ Հայրենիք» նշանաբանն է կրկնուում ամէնուրեք:

Եթէ այդ նշանաբանը պիտի լինի Սփիւռք-Հայրենիք համագործակցութեան նպատակը, եթէ ազգովին պիտի լծուենք կերտելու նոր հայի տիպարը իր ազգային ու բարոյական ուրոյն ինքնութեամբ, եթէ Սփիւռք-Հայրենիք միաւորուած ուժերով պիտի դաստիարակենք նոր սերունդը՝ հաւատարիմ իր ազգային արժէքներին ու պահանջատիրութեան, ապա Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը մեծ դեր ու պատասխանատւութիւն է վերապահուած, որ կարող է ի կատար ածել, որի մէջ կարող է իր ամբողջ փորձն ու գիտելիքը դնել՝ առանց մեծ պաշտօններ զբաղեցնելու, առանց փառ-

քի աթոռներ գրաւելու, առանց թըմբկահարելու, պետական կառոյցների ամենացածր մակարդակներում, ուր առանց երեւալու իրական գործն է կատարում:

Դաշնակցութիւնը ատակ է այդ պարտականութիւնը ստանձնելու, որովհետեւ անհատների կուսակցութիւն չէ՛, որովհետեւ հակառակ սփռուող կարծիքի կամ արտաքին երեւոյթի, իր ղեկավարներով չի անձնաւորում:

Դաշնակցութեան ուժը նրա շարքերն են, դաշնակցական մտածող, ազգային գերագոյն նպատակների վրայ երդում տուած է՛ն նուիրուած, է՛ն հաւատարիմ պարզ շարքայիները, եւ դրանք են, որ պիտի լծուեն աշխատանքի:

Եթէ մեր կուսակցութիւնը յաջողեց անցեալ դարում, պատճառն որոշ էր՝ մտաւ ժողովրդի մէջ, ապրեց նրա հետ, ըմբռնեց նրա ցաւն ու տառապանքը եւ գործեց դրանք դարմանելու համար. զիւղին վարժապետ էր պէտք, զիւղացուն կամ աղքատին բժիշկ էր պէտք, թուրքի ու քուրդի դէմ պաշտպանուէ՛լ էր պէտք, կեղեքողին պատժե՛լ էր պէտք, այնտեղ էր Դաշնակցութիւնը:

Պէտք է մտնել ժողովրդի մէջ՝ Հայաստանի ամէն մի անկիւն, աշխատել ուր որ պէտք է - դպրոց, եկեղեցի, հողագործութեան դաշտ. կարիքը խտրութիւն չունի: Վերակառուցումը պիտի սկսել հիմքից:

Հ.Յ.Դաշնակցութիւնը յաջողել է Սփիւռքում, որովհետեւ Սփիւռքի կազմակերպման, հայապահպանման ու քաղաքականացման մէջ նւիրաբերել է իր կամաւոր մարդուժը:

Դաշնակցութիւնը հացի ճամբայ չէ՛, այլ զոհաբերութեան սեղան:

Որքան աւելի է կազմաւորուում հայ ժողովրդի ազգային նպատակաւոր դրամութիւնը, այնքան աւելի է սեղմում օտար պետութիւնների շահերի հակադրութեան օղակը մեր շուրջ: Մեր ազգային զաղափարախօսութիւնը որակուում է ֆաշիստական, մեր Դատի լուծման ճամ-

բին պայքարը որակում է աշխարհի համար անընդունելի ահաբեկչությամբ: Որակումները կատարում են այնքան հաստատ, այնքան սպառնալի, որ մենք էլ ենք ընկրկում, հաստում ենք որակումներին, փորձում ենք աշխարհին լաւ երեւալու համար զիջումներ կատարել, մեր միջից մաքրել այդ «վտանգաւոր» տարրը, վերացնել այդ «ծայրայեղական» գաղափարը՝ ի ուրախութիւն օտարի, ի վնաս մեր ազգային շահերի ու միասնութեան:

Մենք որպէս ազգ թե՛ Հայրենիքում եւ թե՛ Սփիւռքում ինքնադաստիարակման կարիք ունենք, եթէ հաւատում ենք մեր նպատակներին:

Մեր ժողովրդի ամենապարզ անդամից մինչեւ մեր համայնքների ղեկավարներն ու մեր երկրի իշխանութիւնները պիտի դաւանեն մէկ ու միակ ազգային գաղափարախօսութեան ու ծառայեն դրան:

Նպատակի իրագործման ճամբաները տարբեր կը լինեն, տարբեր կը լինեն նաեւ մտածելակերպն ու կիրառուած միջոցները. դա առողջ է ու բնական: Բայց ազգային շահերը վեր պետք է պահել ամէն ինչից:

Իսկ դրան հասնելու համար երկար ճամբայ կայ կտրելիք, եւ Դաշնակցութիւնը իր աշխարհասփիւռ կառոյցով, ինքնադաստիարակութեան ու գաղափարի պատուաստումի իր աւանդով՝ մեծ դեր կարող է խաղալ այդ մարզում:

Դաշնակցութիւնը ճակատագրական մարտահրաւերի առջեւ է կանգնած Սփիւռքում եւ Հայաստանում: Կա՛մ իր պատմութեան ու իր աւանդին հաւատարիմ կը ստանձնի իր դերը, կա՛մ իր հարիւրամեայ պատմութեան էջը փակած, ինքն էլ կը դառնայ մէկը մեր նորագոյն պատմութեան մէջ ու մանաւանդ վերջին տարիներում բուսնող կուսակցութիւններից, որոնք առանց պատմութեան ընթացքի վրայ կարեւոր դրոշմ դնելու՝ զալիս են ու անցնում: